

† ԱՆՏՈՆ ԶԵՒՈՎ

Ռուս արգի գրականութիւնը մի զգայի կորուստ ունեցաւ Շաղկաժ տաղանդի մէջ անժամանակ վախճանուեց ռուս ժողովրդի սիրելի գրագէտներից մէկը՝ Ա. Չեխովը:

Անտոն Պաւլ. Չեխովը ծնուել էր 1860 թուի յունուարի 17-ին Տագանրոկ քաղաքում. տեղական գիմնադիպյում աւարտելով իւր ուսումը, մտաւ Մոսկուայի համալսարանի բժշկական ֆակուլտէտը, ուր և աւարտեց:

Չեխովն սկսեց գրել տակաւին ուսանող ժամանակից. 1872 թուի յունուարին նա գրեց իւր առաջին ծաղրական վէպիկը Պ. Բուրգի պաւելտական թերթերից մէկում, որին հետեւեց մի շարք պատկերներ, որտեղից և սկսաւ յայտնի լինել նորա անունը: Գրական աշխատութեան առաջին օրերում սպազայ յայտնի գրողը զբաղուեց իւր կողում էր և լրագրական յօդուածներ գրելով: Բայց շուտով նա զգաց իւր կոչումը և սկսեց նուիրուել գեղեցիկ գրականութեան:

Տարիներ շարունակ Չեխովի վէպերն ու պատկերները տպուում էին «НОВ. ВР.»-ի ֆէլիէտոնում, մինչև նորա հեռանալն այդ թերթից: Այնուհետև նորա երկասիրութիւնները հետգհետէ աւելի լրջութիւն ստանալով, տպուում էին առաւելապէս «Рус. МЫСЛЬ»-ի մէջ, որի խմբագրի հետ սերտ յարաբերութեան մէջ էր և ուր մի տարի առաջ՝ գեղարուեստական բաժնի խմբագրի պաշտօն էր ստացել: Անցեալ տարի Չեխովի երկերը լոյս տեսան ահագին քանակութեամբ առանձին գրքերով: Նորա թատերական գրուածները հետզհետէ ներկայացուեցան ռուս բեմի վերայ, որով նա հռչակուեցաւ նաև իբրև բեմական գրող:

Չեխովի բոլոր գրուածները թարգմանուած են օտար լեզուներով, ինչպէս նաև հայերէն. միմիայն «Լոււմայի» էջերում հրատարակուած են նորա 7 վէպիկներ՝ 1. Գրայ, 2. Գրամա, 3. Զարհուրելի գիշեր, 4. Իշխանուհի, 5. Փոխանորդը, 6. Առանց վերնագրի և 7. Խնդեր

ՕՐ. ԱԼԻՍ ՍՏՕՆ ԲԼԱՅՈՒԷԼԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՒՈՒԹԵԱՆ ՏԱՆԱՄՄԵԱԿ

Արտասահմանի թերթերից տեղեկանում ենք, որ տարւոյս մայիսի 30-ին Ամերիկայի Բոստօն քաղաքում հայ հասարակութեան նախաձեռնութեամբ կատարուել է «Լոււմայի» ընթերցողներին լաւ ծանօթ ամերիկացի օրորդ Ալիս Ստօն Բլաւուէլի հայագիտական գործունէութեան տանամանք յօրինանք Ամերիկայի Հայոց առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոս Ստա-

Ճեանի նախագահութեամբ: Հանդիսին մասնակցել են մօտ 200 հայեր և ամերիկացիներ, ուր տեղի են ունեցել բազմաթիւ ատենախօսութիւններ: Ամերիկական հայ գաղութը մատուցել է շնորհայի օրիորդին՝ նորա իւղաներկ մի գեղեցիկ պատկեր:

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Կ. Պօլսից մէջ գրոււմ են հետեւեալը.

Այս օրերս Սանասարեան վարժարանի հրատարակութեամբ լըյս տեսաւ նոյն վարժարանի ըստնամեայ տեղեկագիրը 1881—1901, որ պարունակում է իւր մէջ վարժարանի հիմնադիր Մկրտիչ Սանասարեանի և վարժարանի լուսատիպ պատկերները և կենսագրական ծանօթութիւններ: Տեղեկագրից իմանում ենք, որ Սանասարեան վարժարանի առաջին ընթացաւարտներն ելած են 1891 թուին, իսկ մինչև 1901 թիւը, ունեցած է 110 շրջանաւարտներ, որոնցից 94-ը ուսումնական բաժնից, 4-ը ուսման և արհեստի և 12-ը արհեստդիտական բաժնից: Այդ բանն տարում վարժարանի դրամազրկի եկամտից տրուած է ուսումնարանին 2,472,000 դրշ (մօտ 210,000 ուլրի), իսկ 1,100,666 դրշ. ևս իբրև արտասովոր նպաստ (մօտ 93,000 ուլրի), ընդամենը 303,000 ուլրի: Կտակակատար վսեմ. Կ. Եղեանցի մօրաքոյրը 1893-ին կտակած է 10,925 ուլրի, որի տոկոսը նոյնպէս գործ է ածուում վարժարանի վերայ: Վարժարանը վերջերս գնել է Սիրբէճիի կողմը մի կալուած 19,000 ոսկում (մօտ 170,000 ուլրի), որ կօչուում է Սանասարեան խան (քարվասարայ) և որ տարեկան մօտ 13000 ռուբլի եկամուտ է բերում: Բացի սորանից գնել է նաև զանազան հողեր Կարնոյ մէջ: Վարժարանի դրամազրկի 10% յատկացուած է Սանասարեանի ընթացաւարտներից ուսուցիչներ պատրաստելու Եւրոպայում: Վարժարանը 20 տարում մուտք է ունեցել 7,131,701 դրուշ (մօտ 642,000 ուլրի): 1900—901 շրջանի աշակերտաց թիւն էր 193. առհասարակ աշակերտների թիւը 200-ից աւելի է եղած և ոչ 75-ից պակաս: Գրիգոր խան Համտանձեանը տարեկան մօտ 200 ուլրի է նուիրել 5 տարի շարունակ Հայ լեզուի մասնագէտ ուսուցիչ պատրաստելու վարժարանում պաշտօնավարելու նպատակով:

ՆԱՄԱԿ ՎԵՆՆԱՅԻՑ

10 օգոստոս 1904

Եւրոպայում այս տարի ընդհանրապէս սաստիկ չորային է, անձրևների երկարատև բացակայութեան պատճառով: Ուս-